



*Կալիֆորնիայի պաշտպանության և իրավունքների պաշտպանության  
համակարգ  
Անվճար հեռախոսահամար՝ (800) 776-5746*

---

## *Օժանդակ տեխնոլոգիայի ֆինանսավորում տարածքային կենտրոնի միջոցով*

*2015 թվականի հոկտեմբեր, հրապարակում թիվ 5579.10*

### **I. Ի՞նչ են տարածքային կենտրոնները**

Տարածքային կենտրոնները պատասխանատու են զարգացման խնդիրներ ունեցող անձանց ծառայություններ և աջակցություն տրամադրելու կամ կազմակերպելու համար: Տարածքային կենտրոնների միջոցով օժանդակ տեխնոլոգիայի համար դիմելու նպատակով նախ և առաջ պետք է դիմեք նրանց ծառայություններից օգտվելու համար և բավարարեք ներկայացվող պահանջները: Հաշմանդամություն ունեցող այն անձինք, ովքեր բավարարում են տարածքային կենտրոնների ծառայություններից օգտվելուն ներկայացվող պահանջները, կոչվում են «սպառողներ»: Տարածքային կենտրոնների ծառայություններից օգտվելուն ներկայացվող պահանջներին և այդ ծառայություններին դիմելու կարգին ավելի մանրամասն ծանոթանալու համար այցելեք Department of Developmental Services-ի (DDS/Զարգացման խանգարումներ ունեցող անձանց սոցիալական ապահովության դեպարտամենտ) ինտերնետային կայքի տարածքային կենտրոնների պահանջներին համապատասխանության բաժինը՝ սեղմելով [այստեղ](#): Օժանդակ

## 2՝ 6-ից

տեխնոլոգիան տարածքային կենտրոնների կողմից տրամադրվող ծառայություններից մեկն է: Այլ վայրեր, ինչպիսիք են դպրոցական շրջանները, Medi-Cal-ը (Մեդի-Քալ) և Department of Rehabilitation-ը (Վերականգնողական ծառայությունների դեպարտամենտը), նույնպես տրամադրում են օժանդակ տեխնոլոգիա հաշմանդամություն ունեցող անձանց, սակայն այս փաստաթղթում նշվում է տարածքային կենտրոնների միջոցով օժանդակ տեխնոլոգիա ստանալու մասին:

### **II. Ի՞նչ է օժանդակ տեխնոլոգիան ըստ Lanterman Act-ի (Լանթերմանի օրենք)**

Lanterman Act-ը (Լանթերմանի օրենք) Կալիֆորնիայի օրենքն է, որը զարգացման խնդիրներ ունեցող անձանց իրավունք է տալիս օգտվելու այն ծառայություններից և աջակցությունից, որն անհրաժեշտ է նրանց ավելի ինքնուրույն և բնականոն կյանքով ապրելու համար: Lanterman Act-ում (Լանթերմանի օրենք) կիրառվում է «հատուկ հարմարեցվող սարքավորում» տերմինը՝ օժանդակ տեխնոլոգիան նկարագրելու համար: Welf. & Inst. §4685(c)(1) (Սոցիալական ապահովության և հաստատությունների օրենսգիրք, §4685(q)(1)): Lanterman Act-ում (Լանթերմանի օրենք) նշված չէ հատուկ հարմարեցվող սարքավորումների/օժանդակ տեխնոլոգիայի ամբողջական ցանկը, որոնք ստանալու համար կարող եք դիմել ձեր տարածքային կենտրոնին, սակայն այնտեղ նշված է, որ «այնպիսի հատուկ սարքավորումները, ինչպիսիք են անվասայլակները, հիվանդանոցային մահճակալները, հաղորդակցության սարքերը և այլ անհրաժեշտ սարքեր ու պարագաներ» պետք է հասանելի լինեն անհրաժեշտության դեպքում: Welf. & Inst. §4685(c)(1) (Սոցիալական ապահովության և հաստատությունների օրենսգիրք, §4685(q)(1)): DDS-ի (Զարգացման խանգարումներ ունեցող անձանց սոցիալական ապահովության դեպարտամենտ) ինտերնետային կայքում ասվում է. «Օժանդակ տեխնոլոգիան (AT/OS) իրենից

### 3՝ 6-ի ց

ներկայացնում է զարգացման խնդիրներ և այլ հաշմադամություն ունեցող երեխաների և մեծահասակների կողմից օգտագործվող սարքեր, որոնց շնորհիվ նրանք մասնակցում են առօրյա կյանքին»: DDS-ում (Զարգացման խանգարումներ ունեցող անձանց սոցիալական ապահովության դեպարտամենտ) թվարկված են AT-ի (OS/օժանդակ տեխնոլոգիա) որոշ տեսակներ և տրված են օրինակներ՝ ներառյալ. հաղորդակցման, շարունակության, տեսալսողական, շրջակա միջավայրի կառավարման և ֆիզիկական հարմարեցումներ: AT-ին (OS/օժանդակ տեխնոլոգիա) ավելի մանրամասն կարող էք ծանոթանալ DDS-ի (Զարգացման խանգարումներ ունեցող անձանց սոցիալական ապահովության դեպարտամենտ) ինտերնետային կայքում՝ [այստեղ](#):

### **III. Որպես զարգացման խնդիրներ ունեցող անձ իրավունք ունե՞մ ստանալու օժանդակ տեխնոլոգիա**

Այո: Որպես տարածքային կենտրոնի սպառող դուք իրավունք ունեք ստանալու այնպիսի ծառայություններ և աջակցություն, ինչպիսին է օժանդակ տեխնոլոգիան, «նվազագույն սահմանափակող միջավայրում»: Welf. & Inst. §4648(a)(1)-(2) (Սոցիալական ապահովության և հաստատությունների օրենսգիրք, §4648(ա)(1)-(2)): Սա նշանակում է, որ տարածքային կենտրոնը կարող է օժանդակ տեխնոլոգիա տրամադրել ըստ ձեր բնակության վայրի՝ ձեր սեփական տանը, խնամատար ընտանիքի տանը, առողջապահական հաստատությունում, համայնքային խնամքի լիցենզավորված հաստատությունում կամ տուն-ինտերնատներում: Welf. & Inst. §4648(a)(9)(A) (Սոցիալական

#### 4՝ 6-ի ց

ապահովության և հաստատությունների օրենսգիրք, §4648(ա)(9)(Ա):<sup>1</sup> Տարածքային կենտրոնները պետք է ապահովեն, որ դուք ստանաք այն օժանդակ տեխնոլոգիան, որը կօգնի ձեզ բավարարելու ձեր սեփական անհատական կարիքները: Wel. & Inst. §4648(a)(2) (Սոցիալական ապահովության և հաստատությունների օրենսգիրք, §4648(ա)(2)):

#### IV. Ինչպե՞ս եմ դիմում տարածքային կենտրոնին օժանդակ տեխնոլոգիա ստանալու համար

Երբ պարզվի, որ համապատասխանում եք տարածքային կենտրոնի սպառող, տարածքային կենտրոնը ձեզ համար պետք է ստեղծի Individualized Program Plan (IPP/Անհատական ծրագրի պլան/ԱԾՊ), որը գրավոր պլան է՝ օգնելու համար ձեզ հասնելու ձեր նպատակներին և խնդիրներին, և ներառում է դրանց համար ձեզ անհրաժեշտ ծառայություններն ու աջակցությունը: Ավելին IPP-ի (ԱԾՊ) ստեղծման և դրա կարևորության մասին տե՛ս DDS-ի (Զարգացման խանգարումներ ունեցող անձանց սոցիալական ապահովության դեպարտամենտ) ինտերնետային կայքում՝ [այստեղ](#) (Տե՛ս էջ S-4, S-7 և S-8) Ձեր IPP-ում (ԱԾՊ) պետք է ներառված լինեն բոլոր անհրաժեշտ օժանդակ տեխնոլոգիաները: Եր IPP-ում (ԱԾՊ) ձեր օժանդակ տեխնոլոգիան ներառելուց հետո տարածքային կենտրոնը պետք է վճարի վրա համար,

---

<sup>1</sup> Տարածքային կենտրոնը նախ կխնդրի, որ դուք սպառեք մյուս բոլոր այլընտրանքային աղբյուրները, ինչպիսիք են Medi-Cal-ը (Մեդի-Բայ), California Children Services-ը (Կալիֆորնիայի՝ երեխաներին մատուցվող ծառայությունները), դպրոցական շրջանը կամ մասնավոր առողջապահական ապահովագրությունը, նախքան ծառայությունը և (կամ) պարագան տրամադրելը:

## 5՝ 6-ից

տրամադրի այն ձեզ, սովորեցնի ձեզ օգտվել դրանից և ապահովի դրա սպասարկումը ձեզ համար:

### V. Ի՞նչ կարող եմ անել, եթե տարածքային կենտրոնը մերժում է օժանդակ տեխնոլոգիա ստանալու մասին իմ դիմումը

Եթե տարածքային կենտրոնը մերժում է օժանդակ տեխնոլոգիա ստանալու մասին ձեր դիմումը, և դուք համաձայն չեք այդ որոշման հետ, ապա կարող եք այն «բողոքարկել» (ուղարկել գրավոր ծանուցում՝ ասելով, որ համաձայն չեք): Welf. & Inst. § 4710.5(a) (Սոցիալական ապահովության և հաստատությունների օրենսգիրք, § 4710.5(ա)): Բողոքարկման գործընթացի համար կան ժամկետներ, որոնք պետք է պահպանեք: Նախ, եթե տարածքային կենտրոնը որոշում է, որ չի տրամադրելու որևէ ծառայություն կամ աջակցություն, ապա այն պետք է **5 աշխատանքային օրվա** (շաբաթ, կիրակի և տոն օրերը ներառված չեն) ընթացքում ձեզ գրավոր ծանուցում ուղարկի պատվիրված նամակով: Welf. & Inst. § 4710(b) (Սոցիալական ապահովության և հաստատությունների օրենսգիրք, § 4710(բ)): Երբեմն տարածքային կենտրոնները գրավոր ծանուցում չեն ուղարկում, երբ որոշում են մերժել կամ փոփոխել ձեր ուզած կամ ձեզ անհրաժեշտ ծառայությունը: Դա անօրինական է: Դուք պետք է պահանջեք գրավոր ծանուցում, եթե համաձայն չեք տարածքային կենտրոնի որոշման հետ: Այնուհետև կարող եք որոշել՝ ցանկանում եք արդյոք բողոքարկել, թե ոչ: Եթե ցանկանում եք, որ ծառայությունը կամ աջակցությունը շարունակվի բողոքարկման գործընթացի ժամանակ, ապա պետք է գրավոր բողոք ներկայացնեք տարածքային կենտրոնից ծանուցում ստանալուց հետո **10 օրվա** ընթացքում: Welf. & Inst. § 4715(a) (Սոցիալական ապահովության և հաստատությունների օրենսգիրք, § 4715 (ա)): Արդար լսումների գործընթացի ժամանակ ծառայությունների շարունակումը կոչվում է նաև “aid paid pending” («նյութական օգնության վճարման հետաձգում»):

## 6` 6-ի ց

Դուք ունեք 30 օր արդար լսումների պահանջով բողոք ներկայացնելու համար: Welf. & Inst. § 4710.5(a) (Սոցիալական ապահովության և հաստատությունների օրենսգիրք, 4710.5 (ա)): Սակայն եթե այդքան երկար սպասեք, ապա տարածքային կենտրոնը կարող է դադարեցնել, կրճատել կամ փոփոխել ծառայությունը կամ աջակցությունը բողոքարկման գործընթացի ժամանակ: Արդար լսումների գործընթացին ավելի մանրամասն կարող եք ծանոթանալ DDS-ի (Զարգացման խանգարումներ ունեցող անձանց սոցիալական ապահովության դեպարտամենտ) ինտերնետային կայքում՝ կարդալով «Արդար լսումների գործընթացը 3 տարեկան և դրանից բարձր տարիքի սպառողների համար» [այստեղ](#): Եթե ցանկանում եք տեղեկություններ ստանալ երեք տարեկանից ցածր սպառողների համար արդար լսումների գործընթացի վերաբերյալ, ապա այցելեք DDS-ի (Զարգացման խանգարումներ ունեցող անձանց սոցիալական ապահովության դեպարտամենտ) ինտերնետային կայք՝ [այստեղ](#):

*«Համանդամություն ունեցող անձանց իրավունքներ - Կալիֆորնիա»-ն ֆինանսավորվում է մի շարք աղբյուրներից: Ֆինանսավորման աղբյուրների ամբողջական ցանկը տե՛ս <http://www.disabilityrightsca.org/Documents/ListofGrantsAndContracts.html>.*